

<<ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>>ՅԿ

Չեռագրության աշխատանք

Ուսուցիչ՝ Մարիամ Մարտիրոսյան

Առարկա՝ Մաթեմատիկա

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Ուսումնական հաստատություն՝ Ալավերդու Կ.Դովինյանի անվան N 11 միջն. դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	2
Գլուխ I.	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	
1.1 Ուսուցման մոդելները և առանձնահատկությունները-----	3
1.2 Պասիվ ուսուցման առանձնահատկությունները և մեթոդները-----	6
1.3 Ակտիվ և ինտերակտիվ դաս, դրա պահանջներն ու առանձնահատկությունները - -----	7
1.4 Ուսուցման ակտիվ մեթոդները , դրանց ընտրությունը և կազմակերպման ծանրություն-----	8
1.5 Ուսուցման ակտիվ և պասիվ մեթոդների համեմատական բնութագիրը-----	10
Գլուխ II.	
2.1 Աշակերտների կարծիքը ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման մասին-----	13
2.2 Հարցման արդյունքները և վերլուծությունը-----	15
Եզրակացություն-----	18
Գրականության ցանկ-----	19

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը – Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթությունն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում է հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում:

Ներկայումս շատ մեթոդաբանական նորարարություններ կապված են ինտերակտիվ ուսուցման հետ, որը խրախուսում և զարգացնում է աշակերտների ճանաչողական գործունեությունը, ստեղծագործական կարողությունները և տրամաբանական մտածողությունը: Սովորողների համար կարևոր է սեփական կարծիքն ու տեսակետն արտահայտելու հարթակ ունենալը, իրենց տարեկիցների կարծիքները լսելն ու դրանք ուսուցչի հետ քննարկելը: Մեր օրերում սա իսկապես մի հզոր մոտիվացնող գործիք է, որը պետք է կիրառել: Այս առումով հատկապես կարևոր և հետաքրքիր է ուսումնասիրել ուսումնական գործընթացում ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հնարավորությունները:

Թեմայի նպատակը – հիմնավորել և ցույց տալ ակտիվ և պասիվ ուսումնառության տարբերությունները: Հիմնավորել աշակերտների կողմից պասիվ և ակտիվ տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը:

Առաջադրված խնդիրները - համեմատել դասավանդման ավանդական և ժամանակակից ձևերը: Փորձել այդ ամենը պարզել հետազոտական աշխատանքի միջոցով:

Օգտագործված մեթոդներ - գրականության վերլուծություն, հարցում, տվյալների վերլուծություն:


Կարողունակություններ, որոնք պետք է զարգացնել պասիվ, ակտիվ և ինտերակտիվ ուսուցման ընթացքում

- ✓ Սովորել սովորելու կարողունակություն
- ✓ Ստեղծագործական կարողունակություն
- ✓ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- ✓ Լեզվական գրագիտության կարողունակություն
- ✓ Մշակութային կարողունակություն
- ✓ Թվային և մեդիա կարողունակություն
- ✓ Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Գլուխ I.
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ
1.1 ՈԼՍՈՒՄԱՆ ՄՈՂԵՂՆԵՐ


Մանկավարժության մեջ առանձնացնում են ոլսուցման մի քանի մոդելներ՝

1.Պասիվ. այստեղ աշակերտները հանդիսանում են ոլսումնառության օբյեկտը, որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների աղբյուրի՝ ոլսուցչի փոխանցած նյութը: Դա նշանակում է, որ աշակերտները յուրացնում են նյութը ոլսուցչի խոսքից կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:




Գծապատկեր 1

2.Ակտիվ. այստեղ աշակերտները հանդիսանում են ոլսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ոլսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված աշակերտից ոլսուցչին և ոլսուցչից՝ աշակերտին:



3.Փոխներգործում. (անգլերենից թարգմանած inter - «միջև» act «Գործողություն») թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխազդել միմյանց հետ: Այս մեթոդները առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛աշակերտները, և՛ ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ: Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, խմբի ղեկավարի, աշակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում:



Ինտերակտիվ են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտ- օբյեկտ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը: Դասը պետք է այնպես կառուցված լինի, որ հնարավոր լինի ներգրավվել դասարանի բոլոր սովորողներին՝ յուրաքանչյուրին ըստ հնարավորությունների: Դասավանդողը դասը կառուցելիս հաշվի է առնում այնպիսի առաջադրանքներ և գործունեության ձևեր, որ մասնակցեն բոլորը:

Ինտերակտիվ տեխնոլոգիաները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- ուսումնական դրական խթանի ձևավորում,
- աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- կրթական գործընթացում սովորողների ակտիվ ներգրավում.
- ինքնուրույն գործունեության խթանում,
- ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում (<https://dpir.mskh.am/ru/node/529>)

Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցչի կարևորագույն խնդիրը ֆասիլիտացիան է (աջակցություն, դյուրացում)՝ ուղղորդումը և օգնությունը տեղեկությունների փոխանակման գործընթացում՝

- տեսակետների բազմազանության բացահայտում
- մասնակիցների անձնական փորձի օգտագործում
- սովորողների ակտիվության աջակցում
- տեսության և պրակտիկայի միավորում
- մասնակիցների փորձի փոխհարստացում
- մասնակիցների ընկալման, յուրացման, փոխըմբռնման դյուրացում
- մասնակիցների ստեղծագործականության խրախուսում:

1.2 Պասիվ ուսուցման առանձնահատկությունները և մեթոդները


Պասիվ մեթոդը ենթադրում է մանկավարժի կողմից սահմանված թեմատիկ այով ավանդական եղանակով կյուրթի հաղորդում: Այս համատեքստում դասախոս- ուսանող հարաբերություններում գերակա դիրքում դասախոսն է, ով, ըստ կրթական հին հարացույցի, ինֆորմացիայի եզակի աղբյուր է, որը, գործառնության մեջ դնելով իր մասնագիտական ունակությունները, դասախոսությունը «հասցնում է» ուսանողներին: Վերջիններս հանդես են գալիս պասիվ լսողի, ընկալողի և վերարտադրողի դերում: Այստեղ կորչում է աշակերտի ինքնաբացահայտվելու, ինքնաիրացվելու կարողությունը : Որպես կանոն՝ այս մեթոդի արդյունքների ստուգման համար հիմք են ծառայում թեստերը, ստուգողական աշխատանքները: Ժամանակակից աշխարհում առկա հսկայական տեղեկատվության պայմաններում գրեթե անհնար է դասախոսի կողմից ուսանողներին այդ ամենը փոխանցելը: Ասվածի համատեքստում էլ նշված մեթոդը ուսումնական գործընթացում գրեթե անարդյունավետ է: Սակայն եթե դասընթացը միտված է ծանոթանալուն, օրինակ հիմնական հասկացությունների, տերմինների ուսումնասիրությանը, ապա այս մեթոդը առավել արդյունավետն է: Բացի այդ, այս մեթոդը ենթադրում է նաև քննարկումների բացակայություն, ինչը խնայում է դասախոսի ժամանակը և հնարավորություն է ընձեռում հնավորինս լայն տեղեկատվություն փոխանցել:

[/http://publications.y-su.am/wp-content/uploads/2020/12/Mirimanyan_Mkrtchyan1.pdf/](http://publications.y-su.am/wp-content/uploads/2020/12/Mirimanyan_Mkrtchyan1.pdf/)

Պասիվ տեսակներն են.

- Նախատեսված սխալներով դասախոսություն- Թեման ներկայացնելուց հետո դասախոսը հայտնում է, որ իր խոսքի մեջ կան որոշակի քանակի սխալներ: Դասախոսության ավարտին ուսանողները պետք է դրանք հրապարակեն:
- Դասախոսություն-երկխոսություն-Սա երկու դասախոսների աշխատանք է, որոնք ընթերցում են նույն դասախոսությունը համագործակցելով ինչպես իրար հետ, այնպես էլ լսարանի հետ: Երկխոսության ընթացքում ներկայացվում է հիմնախնդիրը, իրավիճակների վերլուծությունը, լուծումների հիմնավորումը կամ հերքումը և համատեղ ճիշտ լուծման որոնումներ են անում:
- Դասախոսություն (դիտողականության օգտագործմամբ)- Դասախոսություն է, որն ուղեկցվում է ցուցադրությամբ, նկարներով, լուսապատկերով, տեսաֆիլմերով և այլն:

/ <https://multiurok.ru/files/dasavandman-pasiv-met-odner.html> /



1.3 Ակտիվ և ինտերակտիվ դաս, դրա պահանջներն ու առանձնահատկությունները

Կրթությունը հասարակության զարգացման, պետության կայացման և ուժեղ անհատների ձևավորման հիմնական ու կարևորագույն ուղին է: Այն տարբեր ժամանակներում ու տարբեր մշակույթներում տարբեր կերպար է ունեցել: Այսօր էլ աշխարհի տարբեր երկրներում կիրառվում են տարբեր մոդելներ, որոնք երբեմն իրարից կտրուկ տարբերվում են: Օրինակ՝ արևելյան (Կորեա, Չինաստան, Ճապոնիա և այլն)

մոդելում ընդունված է անգիր անելու և տրված կադապարներով թեմաները յուրացնելու մեթոդը, իսկ արևմուտքում (Եվրոպական երկրներ, ԱՄՆ) ավելի շատ ուշադրություն է դարձվում ստեղծագործականության, երեխաների մտածողությունը զարգացնելու վրա: Հայկական կրթական միջավայրում դեռ շարունակում է գերակայել խորհրդային դպրոցի ոճը, համաձայն որի՝ ուսուցիչը կոնկրետ հաստատված ծրագրով, դասագրքի տեքստերով և օժանդակ նյութերի օգնությամբ ներկայացնում է թեման, պահանջելով, որ աշակերտը նույն կերպ սովորի և «վերադարձնի»:

1.4 Ուսուցման ակտիվ մեթոդները , դրանց ընտրությունը և կազմակերպման ձևերը

Ակտիվ և ինտերակտիվ մեթոդների ընտրությունը

Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում: Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել: Մանկավարժական գրականության մեջ առանձնացված են ուսուցման մեթոդների վրա ազդող մի շարք գործոններ: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- Ուսուցման նպատակները և ինդիքները
- Բովանդակությունը
- Ուսուցման նյութի քանակը ու բարդությունը
- Սովորողների պատրաստվածության մակարդակը
- Սովորողների շահագրգռվածությունը
- Սովորողների տարիքը ու աշխատունակությունը
- Ուսումնական ժամաքանակը
- Ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպման պայմանները
- Ուսուցիչ աշակերտ հարաբերությունները
- Սովորողների թվաքանակը դասարանում

https://womanadvice.ru/interaktivnoe-obuchenie-sovremennye-metodiki-polucheniya-znaniy?fbclid=IwAR3AwYPtnplj-udlJpJBmKcpRdtagkzMtNd3GC9TR3DWc_CuXuDcwY5yfgo

Ուսուցման ակտիվ մեթոդները

Ժամանակակից մանկավարժության մեջ այսօր փոխներգործուն մոտեցումների հարուստ զինանոց է ձևավորվել, որոնցից հիշատակենք մի քանիսը.

- 1) Ստեղծագործական հանձնարարություններ,
- 2) Աշխատանք փոքր խմբերում,
- 3) Ուսումնական խաղեր (դերային, գործնական, իմիտացիոն և այլն),
- 4) Հասարակական ռեսուրսների օգտագործում (էքսկուրսիաներ, դասեր՝ ամենատարբեր մասնագետների մասնակցությամբ),
- 5) Նախագծային ուսուցում,
- 6) Արտադասարանական աշխատաքի զանազան եղանակներ (մրցույթներ, հեռուստա- և ռադիոհաղորդումների կազմակերպում, ֆիլմերի և տեսաֆիլմերի, ցուցահանդեսների կազմակերպում),
- 7) Նոր նյութի ուսումնասիրություն և յուրացման ամրապնդում (փոխներգործուն դասախոսությունների միջոցով, վիդեո- և ասուդիոնյութերի պատրաստում, բանավեճեր, խճանկար, ընտրիտ տեսակետ, բաց հարցերի առաջադրում, քննարկումներ և այլն),
- 8) Պրոբլեմային և բաց հարցերի քննարկումներ (որոշումի ծառ, մտագրոհ, իրավիճակի վերլուծություն):

Ինտերակտիվ ուսուցման մեթոդները վերաբերում են համագործակցային ուսուցման տեխնոլոգիաներին, երբ աշակերտները պետք է համագործակցեն ուսուցչի տված խնդիրները լուծելու, դասարանում աշխատելու, նյութը տիրապետելու և իրենց դիրքորոշումները վիճարկելու համար: Այս մեթոդների հիման վրա կարող եք կառուցել ուրիշներ, կամ հիմնովին նոր բան ստեղծել, սա ինտերակտիվ ուսուցման առավելությունն է: (Зайцев 2012)

Պրակտիկան ցույց է տալիս, որ վերոհիշյալ ինտերակտիվ մեթոդները օգնում են հասնել ժամանակակից կրթության արդյունքներին: Այս մեթոդները աշակերտներին թույլ են տալիս ոչ միայն ձեռք բերել գիտելիքներ, այլև զարգացնել հաղորդակցման հմտություններ՝ ուրիշներին լսելու, գնահատելու, քննարկումներին մասնակցելու, համատեղ որոշում կայացնելու, հանդուրժողականություն զարգացնելու և այլն:

Կազմակերպման առանձնահատկությունները

Ինտերակտիվ տեխնոլոգիաները հիմնված են ուսումնական շրջապատի հետ սովորողների ուղղակի փոխազդեցության վրա: Ուսումնական շրջապատը հանդես է գալիս որպես իրականություն, որում սովորողն իր համար գտնում է յուրացվող փորձի

ուրրտ: Ավանդական ուսուցման ժամանակ ուսուցիչը խաղում է ուսումնական տեղեկությունն իր միջով անցկացնող «գտիչի» դեր, ինտերակտիվի ժամանակ՝ «ստանձնում է» օգնականի դեր, ով ակտիվացնում է տեղեկությունների փոխուղղված հոսքերը: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է գիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար (Зайцев, 2012):

1.5 Ուսուցման ակտիվ և պասիվ մեթոդների համեմատական բնութագիրը

Աղյուսակ 1. Ինտերակտիվ և ավանդական դասերի տարբերությունները

(դասին ներկայացվող դիդակտիկ պահանջները)

Դասի նպատակը	Ավանդական դաս	Ժամանակակից դաս (ինտերակտիվ)
	<p>Դասի նպատակը կապված է միայն գիտելիքների և կարողությունների ընկալման հետ:</p> <p>Չարգացումը և դաստիարակությունը ընթանում են ինքնաբերաբար, միաժամանակ գիտելիքների յուրացմամբ:</p>	<ul style="list-style-type: none"> • Դասի նպատակաուղղվածությունը անձի կազմավորման որակի վրա: • Ուսուցման շարժառիթները (նպատակ, պատճառ, գործունեություն, արդյունք)
<p>Դասի բովանդակությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Հնարավորինս բազմաբնույթ տեղեկատվություն • Նյութի մանրակրկիտ շարադրում 	<ul style="list-style-type: none"> • Գլխավորի առանձնացում (նյութի ընդհանրացում)

Ուսուցման միջոցները	Դասի ժամանակ տարբեր միջոցների հնարավորինս շատ կիրառում	Անհրաժեշտ մինիմալ միջոցների օգտագործում
Ուսուցման մեթոդները	<ul style="list-style-type: none"> • Պատրաստի գիտելիքների հաղորդում • Նյութի սերտում • Կողմնորոշում միջակ աշակերտների վրա • Թույլ հետադարձ կապ • Դեկավարում միայն ուսուցչի կողմից 	<ul style="list-style-type: none"> • Սովորողների ճանացողական գործունեության կազմակերպում • Տարբերակված մոտեցում • Ինքնակառավարում և փոխադարձ կառավարում
Ուսուցման կազմակերպման ձևերը	<ul style="list-style-type: none"> • Ուսուցման ձևերի (դաս, սեմինար, ստուգարք) և դասի փուլերի գիտելիքների ստուգում, նյութի շարադրում, ամրապնդում, տնային առաջադրանք) ճշգրիտ սահմանում • Սովորողների առավելապես անհատական կամ ընդհանուր աշխատանք • Մեծ քանակությամբ տնային առաջադրանք 	<ul style="list-style-type: none"> • Հիբրիդային դասի ձևեր (դաս-սեմինար, դաս-ստուգարք) • Սովորողների խմբային կամ կոլեկտիվ աշխատանք • Դասի ժամանակ ուսումնական նյութի 80-90% –ի յուրացում

Ինտերակտիվ տեխնոլոգիաները վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի

դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն: Կազմակերպչի դերում նա կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը սոցիալական և ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտի մասնագիտական փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և այլն:

Նման դասերը շատ հարմար և կիրառելի են դառնում այնպիսի դասարաններում, որտեղ աշակերտների կենսաբանության իմացությունը տարբեր մակարդակների վրա է, այսպես կոչված՝ «խառը դասարաններում»: Դասավանդողը դասը կառուցելիս հաշվի է առնում այնպիսի առաջադրանքներ և գործունեության ձևեր, որ մասնակցեն բոլորը: Ինտերակտիվ դասի շնորհիվ տեղի է ունենում մտքերի և տեղեկությունների փոխանակում, քննարկում, փնտրում և բացահայտում, ինչը նպաստում է անընդհատ կատարելագործմանը, ինչպես սովորողի, այնպես էլ՝ դասավանդողի դեպքում: Դասավանդման այս եղանակը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ ուսուցիչը կարողանում է հետամուտ լինել դրան և իրագործել ուսուցման այս բազմամակարդակ գործընթացը: Ուսուցիչը չպետք է լինի «բոլոր տեղեկությունների և գիտելիքի աղբյուր», նա պետք է մնա գրեթե աննկատ և ղեկավարի աշակերտների աշխատանքն անուղղակի կերպով: Կազմակերպման եղանակները պետք է ընտրվեն կրթության բովանդակության և անհրաժեշտ մեթոդաբանության, ինչպես նաև աշակերտների կարիքներին համապատասխան: (Зайцев, 2012) Մանկավարժի ստեղծագործական գործունեությունը այսօր շատ արդիական պահանջ է հանրակրթական դպրոցի համար: Ամեն օր ուսուցիչը բախվում է իր առջև ծառայած հետևյալ հարցերի պատասխանների փնտրման խնդրին՝ «Ի՞նչ սովորեցնել», «Ինչու՞ սովորեցնել» և «Ինչպե՞ս սովորեցնել»: Առաջին երկու հարցերի պատասխանը լավ կամ վատ տալիս են ուսումնական ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և ուղեցույցները, իսկ երրորդ հարցը հաճախ ամենադժվարն է ուսուցչի համար: «Ինչպե՞ս սովորեցնել»-ը հարց է ձևերի, մեթոդների, հնարների և միջոցների մասին: Այսինքն սա կայանալիք դասի ռազմավարությունն է: Վերջին կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինտերակտիվ ուսուցումը օգնում է սովորողին, ոչ միայն յուրացնել նոր ինֆորմացիա, այլև ավելի երկար ժամանակ պահպանել այն: Պասիվ ուսուցման միջոցով սովորողը կարող է հիշել միայն նյութի 30%-ը, իսկ ինտերակտիվ ուսուցումը հնարավորություն է տալիս պահպանելու ստացված տեղեկության 90%-ը.

- երբ Դուք ինչ-որ բան կարդում եք՝ Դուք հիշում եք 10%-ը,
- երբ Դուք ինչ-որ բան լսում եք՝ Դուք հիշում եք 20%-ը,
- երբ Դուք ինչ-որ բան տեսնում եք՝ Դուք հիշում եք 30%-ը,
- երբ Դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք՝ Դուք հիշում եք 50%-ը,
- երբ Դուք ինչ-որ բան արել եք ինքնուրույն՝ Դուք հիշում եք 90%-

Գլուխ II.

2.1 Աշակերտների կարծիքը ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման մասին

Լճկաձորի հիմնական դպրոցում իրականացվել է աշակերտների անանուն հարցում : Զարցումը իրականացվել է պարզելու աշակերտների վերաբերմունքը դպրոցի ուսուցման գործընթացում ակտիվ ուսուցման տեխնոլոգիաների կրառմանը:

3.1.1 Զետագոտման մեթոդները

- աշակերտների հարցում
- ստացված արդյունքների վերլուծություն,
- վերջնական արդյունքների ընդհանրացում:

Զարցմանը մասնակցող աշակերտներին ներկայացվել է հարցաթերթիկ 7 հարցից բաղկացած:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

(աշակերտի համար)

1.Ուսուցիչը դասավանդվող նյութը ներկայացնում է ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառմամբ:

ա)երբեք

բ) հազվադեպ

գ) հաճախ

դ) միշտ

2.Արդյո՞ք երբեմն դասերը լինում են ձանձրալի և հոգնեցուցիչ

ա)երբեք

բ) հազվադեպ

գ) հաճախ

դ) միշտ

3. Դասին դուք հնարավորություն ունե՞ք լսել միմյանց կարծիքը:

ա) այո

բ) ոչ

գ) դժվարանում եմ պատասխանել

4. Ինչպիսի՞ն են դպրոցի պայմանները (ՏՀՏ սարքավորումներ)

ա) բոլոր դասարաններում առկա է համակարգիչ կամ էլեկտրոնային գրատախտակ

բ) որոշ դասարաններում առկա է համակարգիչ կամ էլեկտրոնային գրատախտակ

գ) առկա է միայն ինֆորմատիկայի դասարանում

5. Դասի ընթացքում ավելի շատ սիրում եք

ա) լսել ուսուցչի դասախոսությունը

բ) լսել աշակերտներին

գ) ուսուցչի հետ միասին վերլուծել, փորձել լուծել որոշակի պրոբլեմային խնդիրներ

6. Ձեր կարծիքով, դասարանում ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառումը ազդո՞ւմ է նյութի հաջող յուրացման վրա:

ա) այո

բ) ոչ

գ) դժվարանում եմ պատասխանել

7. Ինչպե՞ս եք վերաբերվում դասի ընթացքում ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառմանը:

ա) ինձ դուր է գալիս, քանի որ կարծում եմ ունեմ ակտիվ մտածողություն և այդպիսի դասերը հետաքրքիր են և օգնում են ինձ հեշտությամբ յուրացնել նյութը

բ) ինձ դուր չի գալիս, քանի որ այն ինձնից պահանջում է որոշակի ջանքեր


գ) ինձ համար միևնույն է, թե ուսուցման ինչ եղանակ է օգտագործվում

դ) դժվարանում եմ պատասխանել

2.2 Հարցման արդյունքները և վերլուծությունը


1. Ուսուցիչը դասավանդվող სյուլթը ներկայացնում է ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառմամբ:

Տրամագիր 4.




2. Արդյո՞ք երբեմն դասերը լինում են ձանձրալի և հոգևեցուցիչ

Տրամագիր 5.




3. Դասին դուք հնարավորություն ունե՞ք լսել միմյանց կարծիքը:

Տրամագիր 6.



4. Ինչպիսի՞ն են դարոցի պայմանները (ՏՀՏ սարքավորումներ)


Տրամագիր 7.



5. Դասի ընթացքում ավելի շատ սիրում եք




Տրամագիր 8.




6. Ձեր կարծիքով, դասարանում ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառումը ազդու՞մ է նյութի հաջող յուրացման վրա:

Տրամագիր 9.



7. Ինչպե՞ս եք վերաբերվում դասի ընթացքում ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառմանը:

Տրամազիր 10.



Ուսուցման գործընթացում ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ աշակերտների պատասխանների վերլուծությունը բերեց հետևյալ արդյունքներին.

- Հարցման մասնակիցներ 87 % -ը կարծում են, որ դասերին ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառումը օգնում է դասը ավելի լավ յուրացնել:
- Պատասխանելով այն հարցին, թե ինչ աշխատանք են սիրում կատարել դասի ընթացքում , աշակերտների 38 %-ը նշել են, որ ավելի տպավորվում են, երբ համագործակցում են ուսուցչի, և աշակերտների հետ, վերլուծում, փնտրում պատճառներ, փորձում լուծել որոշ խնդիրներ:
- Աշակերտների 48% -ը ունի դրական վերաբերմունք դասերին ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով հետազոտության ընթացքում բացահայտված հիմնական արդյունքները, դրանք կարող ենք ներկայացնել հետևյալ եզրահանգումներով.

- Սովորողների գիտելիքների ձեռքբերման, ընդհանրացումներ կատարելու, վերլուծական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, բնության երևույթները ընկալելու և մեկնաբանելու կարողությունների զարգացման կարևոր նախադրյալ է դառնում ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում:
- Արդի մոտեցումները կնպաստեն սովորողներին գիտական ուսումնասիրություն կատարելու հմտությունների, փորձի արդյունքների վերլուծության ու ընդհանրացումներ կատարելու կարողությունների ձևավորմանը:
- Հարցման մասնակիցներ 87 % -ը կարծում են, որ դասերին ուսուցման հետաքրքիր մեթոդների և միջոցների կիրառումը օգնում է դասը ավելի լավ յուրացնել:
- Պատասխանելով այն հարցին, թե ինչ աշխատանք են սիրում կատարել դասի ընթացքում , աշակերտների 38 %-ը նշել են, որ ավելի տպավորվում են, երբ համագործակցում են ուսուցչի, և աշակերտների հետ, վերլուծում, փնտրում պատճառներ, փորձում լուծել որոշ խնդիրներ:
- Աշակերտների 48% -ը ունի դրական վերաբերմունք ուսուցման գործընթացում ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Ջարուբյունյան Լ., Գարի Վարելա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ.2005, 402 էջ
2. <<Տաթև գիտակրթական համալիր>>, <<Մանկավարժական միտք հանդես>> Երևան 2010թ. էջ 213-214
3. Зайцев В.С. Современные педагогические технологии: учебное пособие. – В 2-х книгах. – Книга 1. – Челябинск, ЧГПУ, 2012 – с. 181:
4. IJAEDU- International E-Journal of Advances in Education, Vol. III, Issue 9, December 2017 p. 547
5. <https://dpir.mskh.am/ru/node/529>
6. http://publications.y-su.am/wp-content/uploads/2020/12/Mirimanyan_Mkrtchyan1.pdf
7. <https://multiurok.ru/files/dasavandman-pasiv-met-odner.html>
8. https://womanadvice.ru/interaktivnoe-obuchenie-sovremennye-metodiki-polucheniya-znaniy?fbclid=IwAR3AwYPtnplj-udlJpJBmKcpRdtagkzMtNd3GC9TR3DWc_CuXuDcwY5yfgo